տեղն լինն սատիճան բարձր քան զայլոց. եւ
ի վերայ գլխուն զմպէթ աղնիւ եւ զարմանա-
20 չէն: Եւ էր նստեալ մեծագին ոսկիակազմ ա-
թոռ: Եւ կայր մատուռն այն վեց սիւն, սուրբ
յերուսաղէմայ բերած. որն սուրբ Յակոբայ,
զորն Սողոմոնի տաճարէն: Եւ այն աներուն
վերայ զմպէթ էր եւ մէջն սեղան. եւ սեղնին
25 առջեւն ապրբշէմէ մեծ տիվան խալի մի
սփռած էր մեծագին: Եւ այն տեղն շինած
էր երեքտակ, բոլորն ամէն նստատեղ. ներ-
քին քարեպիսկոպոսաց, որ կոչին պօնտինօրք.
միջինն վասն արքեպիսկոպոսաց եւ վերինն
30 վասն զարտինալաց: Եւ իբրեւ անցաւ ժամ մի՝
բերին Փափին չորս թագ զարմանալի. երկուսն
վարսուկ որպէս մերս. եւ երկուսն՝ բոլորա-
ձեւ, երեքյարկեան որպէս սաղաւարտ, եւ
այնպէս խոշոր եւ մեծ ակունք կային շարած
35 ի նմա, լալ, արմաս, զրմրուխտ, եաղուխտ: Եւ
ասին թէ մէկ թագն հարիւր հազար Ֆլորի
կ՚ուժէ: Եւ կայր ի վերայ սեղանին երկոտա-
սան առաքեալք. արծաթէ թափած մարդա-
չափ. եւ բազում շամատանք արծթէ մեծա-
40 մեծք, ոսկի սրկիք ակամբք եւ մարգրտովք
ընդելուզեալ. եւ այլ անթիւ սպասք եւ ա-
նոթք. մինչ զի կայծառք, լամանք, ջրամանք,
կրակամանքն արծաթի էին, յորոց վրայ մինչ-
զեռ պշուցեալ հայէաք, երեր եպիսկոպոսն
45 խաչ մի մեծ ի վերայ երկայն ձողոյ, բուն
պատուանդանն եւ ոսոն արծթէ. եւ կանգնե-

24 վերա: — 33 յերքյարկեան: — 46 պատուան-
ատանն: